ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ և ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1 **հեռ. +(374 11) 514-240**

№ Հ/365
18-01-2021

HETQ.am-ի լրագրող Տիրայր Մուրադյանին

Հարգելի պարոն Մուրադյան,

ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից 23.11.2020թ. հայտնաբերվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում: Մասնավորապես՝ քաղաքացի Արայիկ Քաջիկի Հարությունյանի կողմից Երևան քաղաքի Ներքին Շենգավիթ 12-րդ փողոցի 1-ին նրբանցքի հ. 1/1 հասցեում ինքնակամ իրականացվել են երկաթբետոնե հիմնասյուների և հեծանների կառուցման շինաշխատանքներ, որոնց վերաբերյալ 23.11.2020թ. կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 036449 արձանագրությունը:

Արձանագրության հիման վրա 09.12.2020թ. ընդունվել է Վ 49/18 վարչական տույժ նշանակելու մասին որոշումը՝ վերջինիս 200հզ ՀՀ դրամ տուգանելու վերաբերյալ: